Ձև N4

Տեղեկանք
2018 թվականի գերակա խնդիրների և միջոցառումների ծրագրի առաջին եռամսյակի իրականացման արդյունքների

Գերակա խնդիրների իրականացման արդյունքների վերաբերյալ				
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերեկա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**	**Կարծիք**
1	2	3		5
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	**Հավելված N 2** **Կետ.86**	**Վարչատարածքային բարեփոխումների շարունակականության ապահովում** - խոշորացման գործընթացի վերաբերյալ քննարկումներ՝ խոշորացվող համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների և բնակչության հետ - խոշորացման գործընթացի կիրարկումն ապահովող անհրաժեշտ իրավական ակտերի մշակում - պարբերական այցելություններ 2016-2017թթ. խոշորացված համայնքներ՝ առկա խնդիրների լուծման և զարգացմանն ուղղված ծրագրային գաղափարների առնչությամբ մեթոդական և մասնագիտական աջակցության տրամադրում	2018 թվականին խոշորացման ենթակա համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների և բնակչության հետ անց են կացվում քննարկումներ: «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը մշակման փուլում են: Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի մոտ 05.03.2018թ. կայացած խորհրդակցության նիստի արձանագրության 2-րդ կետի հանձնարարությանի՝ կազմվել է ժամանակացույց, որի համաձայն՝ նախարարության պաշտոնյաներն իրականացնում են այցելություններ 2016-2017թթ. խոշորացված համայնքներ և քննարկում համայնքների միավորումից ի վեր առաջացած խնդիրները և հետագա անելիքները:	

		- խոշորացման գործընթացի իրականացում՝ խոշորացված համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին ընթացակարգային աշխատանքների իրականացման ձեռնարկի տրամադրում, ձեռնարկով նախատեսված միջոցառումների իրականացման հարցերի առնչությամբ՝ մեթոդական աջակցության տրամադրում	Ձեռնարկը պատրաստ է և այն կտրամադրվի 2018 թվականին խոշորացվող համայքներին, վերջիններիս ցանկը օրենքով հաստատվելուց հետո:	
	<u>Հավելված N 2</u> **Կետ.87**	**Տեղական ինքնակառավարման ոլորտում տեղեկատվական համակարգերի ներդրում և դրանց գործառնական հնարավորությունների ընդլայնում** - 3000 կամ ավել բնակչություն ունեցող համայնքներում կանոնավոր գործող և օրենսդրությամբ պահանջվող տեղեկատվություն պարունակող համացանցային պաշտոնական կայքերի շահագործման ապահովում -10000 կամ ավել բնակչություն ունեցող համայնքներում ավագանու նիստերը կամ հանրային նշանակության այլ միջոցառումներն համացանցում առցանց հեռարձակելու հնարավորության ապահովում - համայնքապետարաններում շահագործվող համայնքային կառավարման տեղեկատվական համակարգերում (ՀԿՏՀ) էլեկտրոնային վճարումների բաղադրիչի մշակում և ներդրում - խոշորացված համայնքներում համայնքային կառավարման	Համացանցային կայքեր են գործարկվել 2017թ. ընթացքում խոշորացված Գեղամասար, Եղեգիս, Արենի, Մեղրաձոր, Ախթալա և Սարչապետ համայնքներում Ավագանու նիստերի առցանց հեռարձակումներ են սկսել իրականացնել ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ, Նոր Հաճն, Բյուրեղավան և Լոռու մարզի Ստեփանավան համայնքները Ուսումնասիվել է էլեկտրոնային վճարումների ներդրման ուղղությամբ ՀՀ ՏԿԶՆ ենթակայությամբ գործող «Հայաստանի ազգային ախիվ» ՊՈԱԿ-ի փորձը Իրականացվել է թվով 19 խոշորացված համայնքներում ՀԿՏՀ-ի ներդրմանն անհրաժեշտ համակարգչային	

		տեղեկատվական միասնական համակարգերի ներդրում	տեխնիկայի մի մասի ձեռքբերումը և կազմվել է աշխատանքների իրականացման ժամանակացույցը	
	<u>Հավելված N 2</u> **Կետ.88**	**Խոշորացված համայնքներում ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրում** - 18 խոշորացված համայնքներում ծրագրային բյուջետավորման ներդրման նպատակով մշակված նոր մեթոդաբանության կիրակման ուղղությամբ խորհրդատվության տրամադրում - 18 խոշորացված համայնքներում ծրագրային բյուջետավորման ներդրման նպատակով մշակված նոր մեթոդաբանության կիրակման և վերջիններիս հիման վրա բյուջեների կազմման գործընթացում աջակցության ցուցաբերում - 34 խոշորացված համայնքներում ծրագրային բյուջետավորման ներդրման նպատակով ուսուցման կազմակերպում - 34 խոշորացված համայնքներում ծրագրային բյուջետավորման ներդրման նպատակով մշակված նոր մեթոդաբանության կիրակման ուղղությամբ խորհրդատվության տրամադրում	Մշակվել է «ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում ծրագրային բյուջետավորման մեթոդաբանություն» ձեռնարկը, որը ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարին կից հասարակական խորհրդի նիստում քննարկվելուց հետո տրամադրվել է խոշորացված համայնքներին: Ձեռնարկը զետեղված է ՀՀ ՏԿԶՆ պաշտոնական կայքում:Հղումը՝http://mtad.am/hy/methodological-guides/: 18 խոշորացված համայնքների 2018 թվականի բյուջեները կազմված են վերոնշյալ մեթոդաբանության հիման վրա:	
	<u>Հավելված N 2</u> **Կետ.89**	**Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի (ՀՀԱՀ) փաստաթղթերի կոդավորված (շտրիխ կոդ) հաշվառման համակարգի ներդրում**	Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի (ՀՀԱՀ) փաստաթղթերի կոդավորված (շտրիխ կոդ) հաշվառման համակարգի ներդրման ծրագիրը նախատեսված է իրականացնել 2018թ. երկրորդից չորրորդ եռամսյակներում: 2018թ. առաջին եռամսյակում իրականացվել են	

		- ՀՀԱՀ փաստաթղթերի կոդավորված հաշվառման համակարգի տեխնիկական բնութագրի կազմում և համակարգչային ծրագրի մշակում: «ՀՀԱՀ փաստաթղթերի կոդավորված հաշվառման տեղեկատվական շտեմարանում տվյալների ընդգրկման և շտեմարանի վարման կարգը սահմանելու մասին» Հայաստանի ազգային արխիվի տնօրենի իրավական ակտի (հրահանգի) ընդունում - Անհրաժեշտ սարքավորումների գնման կազմակերպում: Հայաստանի ազգային արխիվի աշխատակիցների մասնագիտական ուսուցուցում - ՀՀԱՀ փաստաթղթերի կոդավորված հաշվառման համակարգի սարքավորումների տեղադրում, ներքին ցանցի ստեղծում, համակարգի գործարկում	նմանատիպ աշխատանքների միջազգային փորձի ուսումնասիրություն:	
	<u>Հավելված N 2</u> Կետ.90	**ՀՀ մարզերի 2017-2025թթ. զարգացման ռազմավարություններից բխող գործողությունների մոնիթորինգ և արդյունքների գնահատում** - Մարզպետարանների հետ համատեղ ՀՀ մարզային 2017-2025թթ. զարգացման ռազմավարությունների հիման վրա արդյունքային ցուցանիշների մշակում և դրանց հիման վրա մոնիտորինգի պլանների կառուցում	ՀՀ մարզային 2017-2025թթ. զարգացման ռազմավարությունների հիման վրա մշակվել են արդյունքային ցուցանիշներ, որոնք ներառվել են մոնիտորինգի պլանում : Մոնիտորինգի պլանները ներկայացվել են ՀՀ մարզպետարաններին՝ եռամսյակային պարբերականությամբ հաշվետվություններ ստանալու համար:	

		- Մոնիտորոնգի (այդ թվում՝ ընտրանքային) իրականացում և մարզպետարանների կողմից ներկայացված հաշվետվությունների ամփոփում - ՀՀ մարզպետարանների կողմից ներկայացված մոնիտորինգային հաշվետվությունների ամփոփման արդյունքների ներկայացում ՀՀ կառավարություն		
	<u>Հավելված N 2</u> **Կետ.91**	**Տարածքային կառավարման համակարգում իրականացվող բարեփոխումների ընթացքի ապահովում** - Մարզպետարանների կառուցվածքների վերլուծություն՝ մարզպետարաններին վերապահված գործառույթների համադրմամբ - Վերլուծության արդյունքների ամփոփմամբ մարզպետարանների նոր կառուցվածքների վերաբերյալ առաջարկությունների ձևավորում և շահագրգիռ մարմինների հետ քննարկում - Մարզպետարանների նոր կառուցվածքների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում ՀՀ կառավարություն - Տարածքային կառավարման հայեցակարգով նախատեսված	Մարզպետարանների կառուցվածքների վերլուծության արդյունքները ներառվել են Տարածքային կառավարման հայեցակարգի նախագծում, որը ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել 28.02.2018թ-ի N 01/15.1/1181-18 գրությամբ: Տարածքային կառավարման հայեցակարգի նախագիծը՝ մարզպետարանների նոր կառուցվածքների վերաբերյալ առաջարկությունների ներառմամբ, գտնվում է շահագրգիռ մարմինների հետ քննարկման փուլում՝ ՀՀ վարչապետի N 24.12/[440981]-18 և N02/24.12/4361-18 հանձնարարականների հիման վրա:	

		մարզային նոր կառույցների (մարզային խորհուրդներ, հիմնադրամներ) ձևավորում		
	<u>**Հավելված N 2**</u> **Կետ.92**	**Համայնքային տնտեսության աճի վրա էական ազդեցություն ունեցող ներդրումային և գործարար ծրագրերին աջակցություն** - Համայնքների տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված ծրագրերի համակարգում - Ներդրումային և գործարար ծրագրերի ֆինանսավորման նպատակով վարկային տոկոսների սուբսիդավորման գործընթացի համակարգում	Մշակվել և ՀՀ վարչապետի 15 փետրվարի 2018 թվականի թիվ 136-Ա որոշմամբ հաստատվել է ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված սուբվենցիաներից բացի 2018 թվականին այլ սուբվենցիաներ ստանալու համար միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու և նրա անհատական կազմն ու աշխատակարգը հաստատելու մասին որոշումը: Մշակվել և Միջգերատեչական հանձնաժողովի կարծիքին է ներկայացվել սուբվենցիայի ծրագրերի գնահատման կարգը և հայտի ձևաչափը: ՀՀ մարզերից հավաքագրվել, վերլուծվել, ամփոփվել և Միջգերատեսչական հանձնաժողովի անդամների քննարկմանն ու գնահատմանն են ներկայացվել թվով 40 սուբվենցիայի ծրագրեր, որոնք նախատեսվում է քննարկել 2018 թվականի ապրիլի 6-ին ՀՀ վարչապետի մոտ կայանալիք Հանձնաժողովի նիստի ընթացքում: Մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի նիստի N 53 արձանագրային որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որով առաջարկվում է հանել 30 տոկոս առկա դրամական միջոցների համաֆինանսավորման պահանջը, ինչը սահմանափակում է ներդրումային ծրագրերի իրականացմանը: Դրա հետ մեկտեղ ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն հիմնադրամի հետ մշակվել են պայմանագրերի և հայտերի ձևերը:	

	<u>Հավելված N 2</u> Կետ.93	**Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման համակարգի արդիականացում** - ՀՀ մարզերում և համայնքներում աղբահանության բարելավմանն ուղղված միջոցառումների ձեռնարկում, այդ թվում անհրաժեշտ նորմերի մշակում - Աղբավայրերի շահագործման և փակման ենթակա աղբավայրերի կոնսերվացման աշխատանքների համակարգում	Աղբահանության բնագավառում սահմանված տնտեսական ցուցանիշների կատարման վերահսկողության, ինչպես նաև շեղումների դեպքում օպերատիվ արձագանքելու հնարավորություն ունենալու նպատակով՝ ՀՀ մարզերից 3 ամսվա հաշվետվությունների ձևով հավաքագրվել և վերլուծվել են աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացների եկամուտների և ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունները: Համայնքներին աջակցություն ցուցաբերելու և տնտեսվարող սուբյեկտների իրական քանակները և գործունեության հասցեները բացահայտելու նպատակով հավաքագրվել և վերլուծվել են ՀՀ պետական տարբեր գերատեսչությունների համապատասխան տվյալների պահոցները: Համայնքներին առաջարկվել է կազմել և ներկայացնել պետական ֆինանսական աջակցություն պահանջող փակման և բարեկարգման ենթակա աղբանոցների և աղբավայրերի աշխատանքների իրականացման նախագծանախահաշվային փաստաթղթերը:	